ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020թ. հունվարի 20-21-ը Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Արտակ Քամալյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետը՝

ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)
2020թ. հունվարի 20-ից 21-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

ԵՏՀ արդյունաբերության և ագրոարդյունաբերության համալիրի գծով Կոլեգիայի անդամի (նախարարի) պաշտոնում նշանակվելու կապակցությամբ՝ մասնակցություն ԵՏՀ Կոլեգիայի գործող ղեկավար կազմի հետ հանդիպումներին:

6. Քննարկված թեմաները՝

Հանդիպումների ընթացքում քննարկվել են արդյունաբերության և ագրոարդյունաբերության համալիրի բնագավառներում իրականացվող աշխատանքները և հեռանկարային ծրագրերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը՝

ԵՏՀ արդյունաբերության և ագրոարդյունաբերության համալիրի գծով Կոլեգիայի անդամ (նախարար) Ալեքսանդր Սուբբոտինի հետ քննարկվել են արդյունաբերական և ագրոարդյունաբերական քաղաքականության, առկա միջպետական ծրագրերի, գյուղատնտեսության պետական աջակցության, արդյունաբերական և ագրոարդյունաբերական արտադրության և գիտատեխնիկական համագործակցության, արդյունաբերական և ագրոարդյունաբերական համալիրների զարգացման բնագավառներում տարվող աշխատանքները և հեռանկարները: Ներկայացվել է արդյունաբերական քաղաքականության և գյուղարդյունաբերական քաղաքականության վարչությունների կառուվածքը և գործունեությունը, քննարկվել են աշխատանքների կազմակերպմանը վերաբերող հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

-

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

-

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝ 23.01.2020